



33. ԻՐԵՔ ԱՂՊՐՏԻՆՔ

Կըլնի, շիլնի մի թագավոր: Էս թագավորի երկրումը մի գիժ կնիկ կար՝ ունեւ իրեք տղա. նրանցից մինը ուշապար էր, մինը՝ կատեպան, մեկելը՝ ջուհակ: Մի տարի էս թագավորի երկիրը սով ընկավ. սո՛վ, էն թավուր սո՛վ, որ իմ միս կտրողին ռաստ չգա. մի կտոր հացի հմար հազար գլուխ ին ջարդում, ըն էլ ձեռ չէր ընկնում: Մի օր, շեմ գիտա ոնց էլավ, թագավորի ուշտը կորավ: Էս գիժ կնկա տղեքը տեհան թե չէ՝ բռնեցին, տարան տուն: Գիտային, որ իրանց մերը գիժ ա, կէթա թագավորին խաբար կտա՝ բերին նրան հարսի շորեր հագցրին, լաշակ քցեցին էրեսին, տարան տան պուճախումը կաննացրին:

— Նա՛նի,— ասեցին,— քեզ պտի թաղադան պսակենք. էս ուշտն էլ քու հարսանքի ուշտն ա, մորթում ենք, որ հարսանքավորի հմար կերակուր էփենք:

Իրեք աղպրտիները ուշտը մորթեցին, քերթեցին. միսը դավումա արին, լցրին աքաշները, տարան թաքուն տեղ պահեցին, որ չգտնեն: Բալի ման ին գալի, թե չէ նրանք տնով, տեղով Սիրիրական ին: Ըննա ամեն մարդ գնաց իրա բանին:

Թագավորը իրա նոքարներին դրկեց, որ էթան կորած ուշտին ման գան: Նոքարները շատ դե՛ս ընկան, դե՛ն ընկան՝ չգտան: Վերջը էկան, որ էս գիժ կնկա տղեքանցը հարցնեն: Աղաք ուշապար աղպոր կուշտը գնացին, որ հանդումը վար ու ցանք էր անում:

Թագավորի նոքարները հարցրին.— Ա՛ղպեր, ըստերանք ուղտ հո չե՞ս տեհն:

— Չե՛ք տենում, որ վար եմ անում:— Սա իրան ընենց էր շանց տալի, սաքի թե գիժ ա:

— Մենք քեզ հարցնում ենք՝ ուղտ չես տեհն, դու ասում ես՝ վար եմ անում: Էդ հո մենք էլ ենք տենում. թե բան գիտաս՝ ասա՛:

— Չէ՛, ընենց օր ա ըլնում, որ մի՛ օրավար ենք վարում, ընենց օր ա ըլնում՝ է՛րկու օրավար:

— Ո՛ւղտ ենք ասում, ո՛ւղտ՝ չորս ոննանի, էրկու անկաջանի, շիները ծուռ:

— Էս հլա վարում ենք. վարից եղը պտի ցանենք, բեշարենք, վախտին ջրենք, որ մասիլը չորանա:

Թագավորի նոքարները իրար մեջ ասեցին. «Ա՛ղպեր, սա գիժ ա, սրանից բան չենք հասկանա. էթանք է՛ն մեկել աղպոր կուշտը, քալի մի դրուստ ջուղար տա»:

Գնացին կատեպան աղպոր կուշտը, տեհան պոպոք ա թափ տալի. հարցրին.— Ա՛ղպեր, թագավորի ուղտը կորել ա, բալթի տեհա՞ծ ըլնես:

— Քո՞ն եք, ինչ ա. չե՛ք տենում, որ պոպոք եմ թափ տալի.— Սա էլ իրան ընենց շանց տվեց, սաքի թե գիժ ա:

— Թագավորի ո՛ւղտն ենք ասում, թագավորի ո՛ւղտը. տեհել ես, ասա՝ տեհել եմ, թե չէ՝ պրծավ գնաց:

— Ընենց տարի ա ըլնում, որ պոպոքի հաղարը¹ մի մանեթով ենք ծախում. ընենց տարի էլ ա ըլնում, որ հաղարը² էրկու մանեթով ա էթում. տա՛րին գիտա:

— Ո՛ւղտ ենք ասում, ո՛ւղտ. քա՞ն ես, ինչ ա:

— Էս հլա դեռ պուճուր ծառն ա. մենծ ծառը հիքու գլխին ա. էն եննա պտի թափ տանք:

Նոքարները իրանց-իրանց միտք արին, թե սա նրանից դհա գիժ ա. էթան սրանց տունը, մեկել աղպորը հարցնեն. բալթի նա՛ թագավորի ուղտիցը խաբարովյուն ունենա:

Գնացին ջուլհակ աղպոր կուշտը, հարցրին.— Թագավորի ուղտը կորել ա, ա՛ղպեր, հո չե՞ս տեհն, քեզ մուշտուլուղ կտանք:

— Աչքներդ լա՛վ բաց արեք, լա՛վ. չե՛ք տենում ինչ ա, որ

¹, ² Տպագիր տեքստում՝ հարիբ. ուղղումը բանահավաքինն է (Մ. Կ.):

կտավ եմ գործում:— Սա էլ մեկել աղպորտանց պես՝ իրան գիծ շանց տվեց:

— Քեզ ո՛ւշտ ենք հարցնում, դու ասում ես՝ ֆլան չի, բեհ-ման ա:

— Հա՛, ընենց օր ա ըլնում՝ մի թուփ եմ գործում. ընենց օր ա ըլնում՝ կես թուփ էլ ա չեմ կարում գործի. վա՛խտը զիտա:

— Գիժ հո չե՛ս, ա՛յ աղպեր. մենք քեզ թագավորի ուղտն ենք հարցնում՝ դու կտավիդ վրա ես խոսում:

— Էժան վախտը կտավի թուփը վեց աբասի ա, թանկ վախտը՝ ութ աբասի, յա էրկու մանեթ:

Թագավորի նոքարները ասեցին.— Ա՛ղպեր, սա էն էրկու աղպորից էլ գիժ ա էրնում. էթա՛նք սրանց մորը հարցնենք, բալթի նա՛ մեզ դրուստ ջուղաբ տա:

Գնացին սրանց գիժ մորը հարցրին, թե թագավորի ուղտը հո չի՞ տեհե:— Ո՛նց չէ,— ասեց,— տեհել եմ. իմ տղեքը բերին մոր-թեցին, դավուրմա արին՝ հրենիկ աքաշներում պահել են:

— Էդ ե՛ր:

— Եր որ ես թագա հարս ի, ինձ նոր պտի պսակեին:

Թագավորի նոքարները տեհան, որ էս կնիկը նրանցից գիժ ա՝ թողին գնացին թագավորին իմաց տվին, թե մեռան ման գալոն՝ ուղտը շկարացին գտնի:

